

25.612

333.301

12-78

15 JAN 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

Գրադարան «Աշխատաստի» № 2.

Ն. Ա. Ռուբակին

333



ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Թարգ. Յ. Տէր-Իսրայէլեանց

Թիֆլիս

Տպարան «Մամուլ»

1917

24 JUL 2013

1985

25.612

արև. 14824

333.301

Th-78

ԵՐԲ, ԻՆՉՊԷՍ ԵՒ ԻՆՉՈՒ ԱՌԱՋԱՑԱԻ
ՄԱՍՆԱԻՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ*)

1006
28414

Հողի սեփականությունը

Յայտնի է, որ խաչնարածները իրանց հօտերով անընդհատ տեղափոխւում են մէկ տեղից միւս տեղը, նայած թէ որտեղ անասունների համար կեր կգտնւի: Այդպէս են ապրում մօնղոլացի քոչւորները Ասիայի տափաստաններում և Աֆրիկայի մի քանի նեղրական ցեղեր: Այդ երկրներում հողը չափազանց չաօ է, տափաստանները

*) Այս դրբոյկը մենք տեխնիքական պատճառներով տպագրում ենք կրճատած և վերնագիրը փոխած: Խմբ.

ծայր, սահման չունեն, թափառւիւր որ-
քան կուզես: Այդ խաջնարած ցեղերը
մտածում են այսպէս. «հօտերը և ըս-
տրուկները—մեր սեփականութիւնն են,
իսկ հողը, տափաստանը—ոչ ոքի». նը-
րանց մօտ հողը ոչ ոքի սեփականու-
թիւնը չէ, ինչպէս լոյսը և տաքու-
թիւնը:

Բայց այդպէս չէ այն երկրներում,
որտեղի ժողովուրդը շատ են: Այդպէս
օրինակ, միջին Ասիայի տափաստան-
ներում թափառում են կիրգիզները ի-
րենց ահագին հօտերով: Այդտեղ մի
քանի տեղերում ազգաբնակչութիւնը
բաւականին խիտ է, հօտերը չափա-
զանց մեծ, իսկ դրանց կերակրելու
համար հողը քիչ: Բոլորն էլ գիտեն,
թէ որտեղ են լաւ արօտատեղերը, և
յաճախ պատահում է, որ դէպի այդ-
պիսի արօտատեղեր ուղևորւում են եր-
կաւ ցեղ և նրանց մէջ այդ արօտա-

տեղի համար սկսւում է պատերազմ և
թափուում է մարդկային արիւն. այդ-
պիսի պատերազմները տևում են մին-
չև ցեղերից մէկն ու մէկը յաղթում է,
հալածում է թշնամիներին և իրենց
ստրուկը դարձնում: Որպէսզի խուսա-
փեն պատերազմից՝ շատ ցեղեր առա-
ջուց պայմանաւորւում են իրար հետ և
որոշում թէ ո՞ր ցեղը ո՞րտեղ պէտք է
արածացնէ իր հօտերը, ճիշտն ասած,
նրանք տափաստանը բաժանում են ի-
րար մէջ:

Եւ ահա բանից դուրս է գալիս, որ
այդ եղանակով տափաստաններն էլ
դառնում են այս կամ այն ցեղի սե-
փականութիւն, չնայած մասնաւոր սե-
փականութիւն չէ, այլ ցեղային, բայց
և այնպէս սեփականութիւն է և ամ-
բողջ ցեղեր ճանաչում են իրար իրա-
ւունքը այդպիսի սեփականութեան:
Այդ ձևով երկրի վերայ առաջանում է

հողային սեփականութեան իրաւունքը:

Այդպէս առաջացաւ շատ երկրներում մեծ յեղաշրջումը կեանքի բոլոր չրջաններում: Հողը ոչ ոքինը չէր, այժմ դարձաւ որևէ մէկինը: Հողը նոյնպէս բաժանեց «մերի» և «ոչ-մերի»: Այդ պատահեց շատ հին ժամանակ—հազարաւոր տարիներ առաջ մի քանի երկրներում, և մի քանի ցեղերի մէջ սովորութիւն դարձաւ հողը նոյնպէս հաշուել որևէ մէկի սեփականութիւն:

Հին գրքերում գրած է, որ երբեմն երկրի երեսին ապրող բոլոր ժողովուրդները հողը իրանց սեփականութիւնը չէին հաշուում, և ոչ թէ խաշնարած ցեղերը միայն, այլ և երկրագործ ցեղերը: Հին գրքերում գրաւած է նոյնպէս, որ երբեմն ֆրանսիացիք, գերմանացիք և անգլիացիք հողը իրենցը չէին հաշուում, իսկ ռուսների մասին խօսելն անգամ աւելորդ է:

Այդպէս են մտածում նաև շատ գիտնականներ: Նրանք ասում են, որ ժողովուրդի համար ձեռնառու չէ որևէ մէկի մասնաւոր սեփականութիւնը: Ոչ միայն ձեռնառու չէ այլ և արդարացի չէ: Օրինակի համար՝ Անգլիայում մի քանի հողատէրեր ունեն տասնեակ հազար գետնադիր հողեր: Հասկանալի է, որ իրանց ձեռքերով նրանք չեն կարող մշակել այդ հողը: Այդ հողը նրանք արենդով տալիս են երկրագործներին, կամ մշակելու համար վարձում են այնպիսի բանւորներ, որոնք հող չունեն: Որպէսզի սովից չմեռնեն՝ այդ հողագուրքի բանւորները աշխատում են հողատէրերի համար շատ չնչին վարձատրութեամբ, իսկ արենդով վերցնողները վճարում են հողատէրերին չափազանց բարձր արենդ: Շնորհիւ այդպիսի կարգի հողատէրերը հարստանում են բոլորովին չաշխատե-

լով, իսկ արենդատորները և բանւորները աղքատանում են՝ ուժաթափւելով ծանր աշխատանքից:

Հին ժամանակ Ռուսաստանում ամեն ուսւս մարդ իրաւունք ունէր բնակւելու որտեղ որ ցանկանար և մշակելու այնքան հող՝ որքան կամենար: Հողը ազատ էր բոլորի համար—մաքրէր վարելահող, որտեղ ցանկանում ես, վերցրու և մշակիր՝ որքան կարող ես: Որտեղ դու աշխատանք ես թափել՝ այնտեղ էլ ապրիր, և ոչ ոք իրաւունք չունի քեզ հալածելու այդտեղից, քանի որ դու աշխատում ես: Վերցրու այնքան հող՝ որքան ոյժդ պատում է: Հին ժամանակ հողից օգտւելը այդպէս էլ կոչւում էր—«ոյժի չափ»: Այդպէս էլ գրւում էր, «Որտեղ քո կացիքը, արօրը և գերանդէն գործել են—այնտեղն էլ քոնն է»: Ուրիշ խօսքով ասած, որքան հեռու են տարածւել քո միջոց-

ները և աշխատանքը, նոյնքան էլ տարածւում է քո հողից օգտւելու իրաւունքը, քո աշխատանքի սահմանից այն կողմը քոնը լինել չէ կարող: Գոհողից դէնը դանւած հողը պատկանում է կամ ուրիշ աշխատաւորի՝ կամ ոչ ոքի, այդպիսի հողը կոչւում էր վայրենի կամ անտէր հող: Հողը բոլորին էլ բաւականութիւն էր տալիս, դրա համար էլ միտք չուներ սրա կամ նրա սեփականութիւնը հաշւել: Հողը ոչ ոք ոչ ծախսում էր և ոչ գնում, որովհետև ամեն մէկը կարող էր ձրի վերցնել: Բայց միայն քո ձեռքերով չես կարող շատ հող մշակել, դրա համար էլ ամեն մէկը մշակում էր այնքան, որքան անհրաժեշտ է իրեն կերակրելու համար: Հասկանալի է, որ ամեն մէկը կցանկանայ շատ ցանել, բայց դրա համար պէտք է ունենալ շատ աշխատող ձեռքեր, աշխատող կենդանիներ, արօրներ,

ցաքաններ, սայլեր և ուրիշ գործիքներ, Բայց այդ բոլորը շատ թանգ արժան, և ամեն մէկը չէ կարող զբանց շինել կամ գներ: Նրանց պատրաստելու համար պէտք է աշխատանք թափել, իսկ ինչի վերայ շատ աշխատանք են թափում՝ այն թանգ է արժենում:

Կնշանակէ, մեծ ցանքսերի տէր դառնալու համար, ամենից առաջ անհրաժեշտ է ձեռք բերել, որտեղից էլ որ լինի, էփան կամ ձրի աշխատանք: Իսկ որտեղից ձեռք բերել: Ձեռք բերելու միջոցը շատ հասարակ էր — պատերազմ և ուրիշի հողերի գրաւում: Շնորհիւ այդ բանի շատ երկրներում առաջացան մեծ թուղ ստրուկներ: Սովորաբար, յափշտակւած որսը շուտով բաժանւում էր: Այդ որսից ամենից շատ ընկնում էր այն մարդկանց ձեռքը, որոնք ուժեղ էին, յայտնի և հարուստ: Հասկանալի է, որ ամենից պռաջ հարստա-

նում էին զօրապետները և նրա մօտիկ մարդիկ: Ամեն տեսակ որս ամենից շատ ընկնում էր նրանց ձեռքը, — դրանց թուում նաև ստրուկներ: Իսկ լինչպէս էին վարւում նրանք իրենց ստրուկներին հետ. նրանք հարկադրում էին ստրուկներին մշակելու իրենց հողերը: Այդպիսով ուժեղ մարդիկ ունեցան էփան և ձրի աշխատող ձեռքեր: Նրա համար էլ նրանք կարողանում էին մշակել աւելի շատ հող, քան կարող էին ուրիշները: Նրանք իրենց օգուտելու համար յափշտակեցին մեծ հողաբաժիններ և այդ հողի մասին ասում էին այսպէս. «Այս մեր հողերն են, որովհետև նրանց վերայ աշխատում են մեր սեփական ստրուկները»:

Այդ եղանակով հողը նոյնպէս սկսեց մասնաւոր սեփականութիւն գտնաւոր: Կնշանակէ հողի սեփականութիւնը առաջացաւ ստրկատիրութիւնից յետոյ:

Նա առաջացաւ շնորհիւ մարդկանց սեփականացնելու իրաւունքի։ Որպէսզի հողը մասնաւոր սեփականութիւն դառնայ, պէտք է ունենալ իրաւագուրկ բանւորներ։ Նա՛ որով ձեռքերով է մըշակում հողը՝ չէ կարող շատ հող ունենալ։ Բայց նա՛ որով հողը մշակում է ուրիշի ձեռքերով՝ հասկանալի է, որ կարող վերցնել այնքան հող՝ որքան կամենայ։ Որքան շատ հող վերցնի նա՛ այնքան շատ էլ օգուտ կստանայ։ Եւ ահա տիրող, հարուստ և ուժեղ մարդիկ ամեն կերպ աշխատում էին ձեռք բերել օտուկներ և մշակել տալ նորանց շատ հողեր և այդպիսով հողը դարձնել իրենց մասնաւոր սեփականութիւնը։

Այդպէս առաջացան դեռ հնումը հողատէրերը, հողի սեփականատէրերը։ Հողը սկսեց ձեռքից ձեռք ընկնել։ Դրան շատ նպաստում էին զանազան

պատերազմական հողային գրաւումներ։ Ինչպէս առաջ ցեղը կուռում էր ցեղի դէմ կենդանիներ և օտուկներ ձեռք բերելու համար, այժմ էլ սկսեցին պատերազմել հողեր գրաւելու համար։ Մէկ ցեղ յարձակում էր միւս ցեղի վերայ, մէկ ցեղ տիրում էր միւս ցեղին։ Յաղթողները հողը յայտարարում էին իրենցը և յետոյ բաժանում իրար մէջ։ Հողերի բաժանումը զանազան ցեղերի մէջ զանազան տեսակ էր կատարւում։

Երբեմն հողը յայտարարւում էր միայն առաջնորդի սեփականութիւնը, իսկ նա բաժանում էր զանազան մարդկանց։ Երբեմն էլ գրաւած հողերը բաժանւում էին երեք մասի։ Մէկ մասը մնում էր պահեստի համար, միւս մասը բաժանւում էր յաղթողների մէջ, իսկ երրորդ մասը թողնւում էր յաղթւածներին և հպատակեցրածներին։ Բայց լի-

նում էր և այնպէս, որ բոլոր պարտաւանները յայտարարուում էին ստրուկներ և հարիւր հազարաւոր մարդիկ վաճառքի էին հանուում ստրկութեան համար, մինչև անգամ տարւում էին ուրիշ երկրներ: Նոյնիսկ նրանք, ովքեր մնացել են իրենց նախկին հողի վերայ նրանք էլ դադարում են ազատ մարդ լինելուց, դառնում էին կամ ստրուկներ կամ ճորտեր և պարտաւորւում էին վճարել յաղթողներին մեծ հարկ:

Այդպէս, շնորհիւ պատերազմների և գրաւումների, բոլոր հողերը դարձան մասնաւոր սեփականութիւն: Ամեն մի կտոր հողը ունի իր սեփականատէրը:

Այդ սեփականատէրը հողի հետ վարւում է այնպէս, ինչպէս ցանկանում է. ծախում է կամ գրաւ է դնում, մշակում է նրան ուրիշի ձեռքերով կամ թողնում է բոլորովին անմշակ և կամ տալիս է արենդով: Ամեն մի հողատէր

ասում է իր կտոր հողի մասին. «Այդ իմ սեփականութիւնն է: Ես ունեմ նրա վերայ իրաւունք, իսկ սեփականութեան իրաւունքը սրբագործւած է և անբռնաբարելի, որովհետև նա հաստատւած է օրէնքով»:

Եւ ճիշտ որ, նա հաստատւած է օրէնքով. բայց ի՞նչու է նա օրէնքով հաստատւած. որովհետև այդ նոյն օրէնքը կազմում և հաստատում են ոչ թէ ամբողջ ժողովուրդը, այլ հենց իրենք հողատէրերը, այսինքն, այն մարդիկը, որոնց համար շատ ձեռնառու է, որ հողը համարւի մասնաւոր սեփականութիւն: Հողը սեփականացնելու բոլոր օրէնքները առաջացել են հողի մասնաւոր սեփականատէրերի օգուտից և չահերից: Առաջացան օրէնքներ սեփականացնելու դեռերը, լճերը, ծովերը, նոյնիսկ օվկիանոսները և հողի ներսում գտնւած հարստութիւնները: Օ-

րէնքը միայն հաստատեց հողատէրերի օգուտները, հաստատեց անարդարութիւնը մնացած բոլոր մարդկանց նկատմամբ:

Իսկ ինչ եղան այն մարդիկը, որոնք առաջ ապրում էին հողի վերայ՝ առանց որևէ մէկից իրաւունք ստանալու: Նրանք ընկան սեփականտէրերի ձեռքը, դարձան ստրուկներ, ճորտեր, իրաւազուրկներ:

Ահա, օրինակի համար, ինչպէս է եղել Ռուսաստանում եօթ հարիւր տարի սրանից առաջ: 1237 թւին Ռուսաստանի վրայ յարձակեցին թաթարները, ջարդեցին ուսուաց զօրքը և հրպատակեցրին ամբողջ ուսու ժողովուրդը: Թաթարների խանը ամբողջ ուսուաց հող յայտարարեց իր սեփականութիւնը: Անցաւ մօտաւորապէս երկու հարիւր տարի. մեծացաւ Մոսկվա քաղաքը, հարստացան և ուժեղացան նրա

տէրերը, որոնք կոչւում էին Մոսկվայի մեծ իշխաններ: Ժողովրդի օգնութեամբ նրանք հաւաքեցին մեծ զօրք և 1380 թւին ջարդեցին թաթարներին: Դրանից հարիւր տարի յետոյ ուսուաց երկիրը բոլորովին ազատեց թաթարների լծից. այդ պատահեց 1480 թւին. Բայց ուսուաց հողը դաշարեց արդեօք մասնաւոր սեփականութիւն լինելուց՝ — ոչ: Մինչև այդ ժամանակնա համարւում էր թաթար խաների սեփականութիւն, իսկ 1480 թւից յետոյ ամբողջ ուսուաց հողը սկսեց հաշւել Մոսկվայի կնեազների և յետոյ Մոսկվայի թագաւորների սեփականութիւն: Ռուսաց օրէնքների մէջ սկսեց զբւել, որ հողը պատկանում է արքային, և նա իրաւունք ունի վարելու հողի հետ այնպէս՝ ինչպէս ցանկանում է. կարող է բաժանել, վաճառել, զնել, փոխել: Եւ ահա թագաւորները և իշխանները

1006 14 82
2844 4158

սկսեցին վարել հողի հետ, ինչպէս իրանց մասնաւոր սեփականութեան հետ: Նրանք բաժանում էին հողը ինչպէս և ում ցանկանում էին: Բաժանում էին ոչ միայն ազատ հողերը, այլ և բնակւած հողերը գիւղացիների հետ միասին, որովհետեւ գիւղացիք էլ հաշւում էին նրանց մասնաւոր սեփականութիւնը: Երբեմն հողը տալիս էին տիրելու ժամանակաւորապէս, օրին. մինչ ևայն ժամանակ, որքան հողաբաժնի տէրը ծառայում էր թագաւորի մօտ: Յետոյ հողը սկսեցին բաժանել մինչև մահ, իսկ անելի ուշ տալիս էին իբրև յաւիտենական սեփականութիւն: Սկզբներում հողը տալիս էին պաշտօնի համար, յետոյ զանազան ծառայութիւնների համար, իսկ յետոյ, հենց այնպէս, տալիս էին իբրև թագաւորական ողորմածութիւն: Հասկանալի է, որ ոչ ոք չէր հարցնում այն գիւղացիների կարծիքը, որոնք

նստած են այդ հողերի վերայ, և այն հողերը, որ դրանք մշակում էին՝ դառնում էին զանազան պարոնների մասնաւոր սեփականութիւն, իսկ հողի հետ միասին նրանց սեփականութիւնը դարձան զրա վրայ աշխատող գիւղացիք, այսինքն կենդանի մարդիկ: Բոլոր հողերը ընկան մասնաւոր մարդկանց ձեռքը.— նոյնը պատահեց նաև գիւղացիների հետ: Հողը յատկացրին հողատէրերին, իսկ գիւղացիներին անբաժանելի կերպով կապեցին հողի հետ և սկսեցին հողի հետ ծախել և փոխել նաև գիւղացիներին: Սկզբներում մարդկանց ծախում էին հողի հետ միասին, յետոյ սկսեցին վաճառել մարդկանց մինչև անգամ առանց հողի: Այդպէս առաջացան Ռուսաստանում ճորտ գիւղացիները, այդպէս էլ ապրում էին նրանք մինչև 1861 թիւը, այդ յայտնի է բոլորին. հողատէրերը երբեմն վար-

և ում էին նրանց հետ առելի վատ, քան ընտանի կենդանիները հետ:

—

Համայնական սեփականութիւն

Ահա թէ ինչպէս ընտելեան զանազան բարեքները, մինչև անգամ մարդիկ, վերջ ի վերջոյ դարձան մասնաւոր սեփականութիւն, և այդ կարգը առաջացաւ ինքը իրան, բնական ընթացքով:

Բայց գուցէ այդպէս էլ պէտք է լինէր, երկրի վերայ պէտք է առաջ դառնին սեփականատէրեր և սեփականագլուրկներ, հարուստներ և աղքատներ, կուշտեր և քաղցածներ: Ասում են, որ այդ չի կարելի ոչնչացնել, նորովհետև այդպէս է եղել դարերից ի վեր: Բայց այդպէս է արդեօք. միթէ քիչ բան է դարերից ի վեր գոյութիւն ունե-

ցել: Օրինակի համար, եղել են երբեմն ստրուկներ, և նրանց տէրերը ասում էին ստրկութեան մասին. «Այդ անհրաժեշտ է, այդպէս էլ պէտք է լինի, որովհետև գոյութիւն ունի դարերից ի վեր» Միևնոյնը ասում էին նաև հողատէրերը իրանց ճորտերի մասին, բայց ներկայումս չկան ոչ ստրուկներ և ոչ ճորտեր: Բացի դրանից, միթէ սեփականութեան իրաւունքը գոյութիւն է ունեցել աշխարհի սկզբից ի վեր:— Ո՛չ: Արդէն ասեցինք, որ եղել են այնպիսի ժամանակներ, երբ հողը և բնութեան միւս բարեքները համարւել են ընդհանուրի սեփականութիւն—համայնական սեփականութիւն. մասնաւոր սեփականութիւն համարում էին միայն այն, ինչ իւրաքանչիւր մարդ շինել է իր աշխատանքով:

Բայց ինչո՞ւ համար այդ կարգը նոր էր չհաստատանք հիմա: Ասում են, որ

դա միանգամայն անկարելի է: Բայց
 մի է այդ ասում: Նրանք են այդ ա-
 սում, որոնց համար նոր կարգերը ձե-
 ուղնու չեն: Սակայն աշխարհումս կան
 մարդիկ, որոնք այդ կերպ են ասում:
 Նրանք հաստատում են, որ, ընդհակա-
 ուակը, ներկայիս կարգերը կվերջանան,
 և այդ կպատահի այն ժամանակ, երբ
 մասնաւոր սեփականութիւն ունենալու
 իրաւունքը օրէնքով խիստ կերպով կը-
 սահմանափակւի՝ հաստատւած ժողո-
 վուրդի համաձայնութեամբ և ստիպ-
 մամբ: Մասնաւոր սեփականութիւն
 պէտք է հաշւել միայն այն իրերը,
 որոնք հարկաւոր են մարդուն մասնա-
 ւոր գործածութեան համար, օրինակ՝
 հագուստներ, ամաններ, զրքեր և առ-
 հասարակ տնային կահ-կարասիներ:
 Իսկ մնացած բոլորը՝ օրինակ՝ հողը,
 տները, գործարանները, ապրանքների
 պահեստները, երկաթուղիները, չոգե-

նաւերը, խանութները պէտք է համայ-
 նական սեփականութիւն դառնան:

Այդ բոլորը հիմա էլ դառնում են
 համայնական սեփականութիւն: Հիմա
 էլ կան ոչ միայն մասնաւոր սեփակա-
 նութիւններ, այլ և համայնական: Օրի-
 նակի համար, իմն են պատկանում
 քաղաքների փողոցները և կամուրջնե-
 րը: Դրանք— ընդհանուրի սեփականու-
 թիւնն են: Կարող է նրանցից օգուել
 ամեն ոք, որքան ցանկանայ, վճարելով
 միայն տարեկան մի քանի կոպէկներ
 նրանց պահելու համար: Շատ էիմնաւոր-
 կութիւններ նայնպէս դարձել են արդէն
 համայնական սեփականութիւն և պատ-
 կանում են ոչ թէ որևէ մէկ մարդու,
 այլ ամբողջ համայնքին: Օր.՝ զեմսկի
 դպրոցները, հիւանդանոցները, դիւղա
 տընտեսական գործիքների պահեստները,
 գրադարանները և ընթերցարանները
 պատկանում են զեմստուօին: Իսկ ինչ

է նշանակում զեմատուօ: Զեմատուօ—
նշանակում է ինքը ժողովուրդը, որը
ընտրել է իւր ներկայացուցիչներին,
իսկ նրանք էլ կառավարում են զեմ-
սկի հիմնարկութիւնները, զեկավա-
րում են զեմսկի տնտեսութիւնը. կնշա-
նակէ այդ բոլոր հիմնարկութիւնները
պատկանում են ամբողջ ժողովրդին և
կազմում են նրա համայնական սեփա-
կանութիւնը: Ամեն մէկը կարող է նը-
րանցից օգտուել որքան կարող է: Իսկ
ինչ բան են սպառողական խանութնե-
րը, ում են պատկանում զրանք, բոլոր
բաժնետէրերին: Ներկայումս կան այն-
պիսի արհեստանոցներ և գործարաններ,
որոնք պատկանում են հենց չիրենց
բանտրներին: Ով աշխատում է այդ-
տեղ՝ նա էլ տէրն է: Իսկ զրանց կա-
ռավարում են ընտրած մարդիկ: Եթէ
մի քիչ լաւ նայենք մեր չորս կողմը՝ կը-
տեսնենք, որ շատ հիմնարկութիւններ

—բանկեր, երկաթուղիներ, գործարան-
ներ— համայնական սեփականութիւններ
են: Այդ սեփականութիւնը արդիւնք է
տալիս, իսկ արդիւնքը արդարացի կեր-
պով բաժանում է բոլոր բաժնետէրերի
միջև: Կնշանակէ հիմա էլ գոյութիւն ու-
նի համայնական սեփականութիւն: Կը-
նշանակէ նա կարող է գոյութիւն ու-
նենալ: Արդէն կայ իրաւունք համայնա-
կան սեփականութեան: Ամեն մի մարդ-
կային խումբ իրաւունք ունի ձեռք բե-
րելու անբաժանելի ընդհանուր սեփա-
կանութիւն, կարող են միասին աշխա-
տել, արդիւնաբերել զանազան ապրանք-
ներ, բաժանել իրար մէջ արդիւնքը, նա-
յած՝ թէ ով որքան է աշխատել: Հաս-
կանալի է, որ այդպիսի ընդհանուր սե-
փականութիւնը հասարակութեանն աւել-
ի արդիւնք է տալիս, քան մասնաւոր
սեփականութիւնը, որը կարող է օգ-
տաւէտ լինել միայն մէկի համար:


Բայց այդ համայնական սեփականու-
թիւնը, որի մասին վերերը խօսեցինք,
դեռեւ իսկական համայնական սեփա-
կանութիւն չէ: Իսկական պէտք է հաշ-
ւել միայն այն, որը իսկապէս կլինի
բոլորի համայնական սեփականութիւ-
նը և ոչ որեւէ շրջանի կամ խմբի: Օրի-
րինակի համար, օրէնքը չի լոռնում մաս-
նակցելու բոլորին զեմաստօին, հող չու-
նեցող աղքատները այդտեղ բոլորովին
չեն թողւում, իսկ ազնւականները և
հողատէրերը զեմաստօնում ունին ձայնի
մեծ գերակշռութիւն: Կամ՝ վերցնենք
արքունական գործարանները և երկա-
թուղիները: Ո՞վ է նրանց տէրը. կա-
ռավարութիւնը, այսինքն պետական
բարձր հիմնարկութիւնները, իսկ ուլ-
քեր են կառավարում այդ հիմնարկու-
թիւնները. նշանաւոր չինովնիկներ, աղ-
նւականներ, հարուստ սեփականատէ-
րեր: Կնշանակէ ամեն մի բանւորի չեն

թոյլատրում ընդհանուրի սեփականու-
թիւնը կառավարելու և դրանից օգուե-
լու, ժողովրդի մեծ մասը կարած է դը-
րանից: Դրա համար էլ այժմեան հա-
մայնական սեփականութիւնները դեռ-
եւ ամբողջ ժողովրդի սեփականութիւ-
նը չեն: Իսկական համայնական սեփա-
կանութիւնը պէտք է լինի իսկապէս բո-
լորի սեփականութիւնը—բոլորի առանց
բացառութեան:

Ուրեմն, երբ բոլոր մարդկային հա-
րստութիւնները, բնութեան բարիքնե-
րը, բոլորը, ինչ ստեղծագործել է մար-
դը, կղաւնայ այդպիսի համայնական
սեփականութիւն՝ այն ժամանակ էլ
կվերջանայ հարստութեան այժմեան
անհաւատար բաժանումը: Այն ժամա-
նակ չեն լինի ոչ քաղցած աղքատներ

և ոչ յղփացած հարուստներ: Ամեն մէ-
կը կվերցնի հասարակութիւնից որքան
հարկաւոր է իրան և կաշխատէ հասա-
րակութեան համար որքան կարող է:





Գինն է 10 .կոպ.

333.301

Դ-78

ՀՀ Ազգային գրադարան



NL0209101

